ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» մայիսի 2014թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ. 95-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականությունը համարվող Արարատյան 1-ին զանգվածի հ.12 շենքի հ.43՝ 53.1 քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 02.11.2011թ. հ.2678338 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Ստեփան Խաչատուրովին, Զարիկ Խաչատուրովային, Արսեն Խաչատուրովին, Ելենա Խաչատուրովային և Գալինա Խաչատուրովային:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ստեփան Խաչատուրովը դիմել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան՝ Արարատյան 1-ին զանգված հ.12 շենքի հ.43 բնակարանը, որպես համատեղ սեփականություն իր ընտանիքին անդամներին նվիրելու խնդրանքով:

Արարատյան 1-ին զանգված հ.12 շենքը 1988 թվականի Բաքվի դեպքերից հետո բնակեցվել է բռնագաղթված և բնակարանային պայմանների կարիքավոր այլ բազմանդամ ընտանիքներով:

Ստեփան Խաչատուրովի ընտանիքը (5 անձ) բռնագաղթվել է Բաքու քաղաքից և շուրջ 20 տարի առանց իրավահաստատող փաստաթղթերի հաշվառված բնակվում է Արարատյան 1-ին զանգված հ.12 շենքի հ.43 բնակարանում (հիմք՝ բնակչության պետական ռեգիստրի հաշվառման հ.247220 տեղեկանքը):

Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.95-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.95-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքները, ուստի անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևանի ավագանու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ